ՀԵՏԱՔՐՔԻՐ Է, ՉԷ՞…

Սովորական մի ուրբաթ կեսօր է, և դու գնում ես դեպի տուն։ Կարգավորում ես ռադիոն։ Նորությունները պատմում են ոչ կարևոր ինչ որ բան. հեռավոր մի երկրում ինչ որ համաճարակից, որի մասին երբևէ չի ասվել, երեք մարդ է մահացել։ Մեծ ուշադրություն չես դարձնում այս լսածիդ…

Երկուշաբթի, երբ արթնանում ես, լսում ես, որ արդեն ոչ թե երեք, այլ երեսուն հազար մարդ է մահացել Հնդկաստանի հեռավոր բլուրներում։ ԱՄՆ–ի առողջապահության վերահսկողության ծառայողները գնացել են հետազոտելու երևույթը։

Երեքշաբթի օրը այս լուրը դառնում է լրատվամիջոցների գլխավոր թեման՝ գրված առաջին էջերում, որով արդեն ո՛չ թե միայն Հնդկաստանում, այլ նաև Պակիստանում, Իրանում ու Ավղանստանում… և արագորեն այս նորությունն է հայտնվում բոլոր լրատվամիջոցներով։ Այն սկսում են կոչել «Հանելուկային վարակ», և բոլորը հարց են տալիս՝ ինչպե՞ս է այն կանգնեցվելու։ Եվրոպայում խուճապի մեջ են և փակում են սահմանները։ Լուրերով լսում ես մի կնոջ, ով պատմում է հանելուկային վարակից հիվանդանոցում մահացած մի մարդու մասին։

Լրատվամիջոցներն ասում են, որ եթե վիրուսակիր ես, մեկ շաբաթ նույնիսկ չես զգում, որ հիվանդ ես, հետո չորս օր անտանելի ցավեր ես ունենում և վերջում՝ մահանում։

Ահա նաև Մեծ Բրիտանիան է իր սահմանները փակում, սակայն արդեն ուշ է։

Հաջորդ օրը Միացյալ Նահանգների նախագահն է սահմանը փակում՝ բացառելու համար վարակի ներթափանցումը երկիր։ Մարդիկ մինչև բժշկական քննություն չանցնեն, չեն կարող երկիր մտնել։

Հաջորդ օրը բոլորը հավաքվում են եկեղեցում աղոթելու, և հանկարծ մի մարդ է մտնում եկեղեցի և ասում՝ ռադիոն միացրեք և լուրերը լսեք. երկու կին է մահացել Նյու Յորքում։ Թվում է, թե վարակը գրավել է աշխարհը։

Գիտնականները շարունակում են փնտրել հակահարուցիչը, սակայն կարծես ոչինչ չի ստացվում։

Շուտով ստացվում է սպասված լուրը. բացահայտվել է վիրուսի ԴՆԹ–ն (DNS), հնարավոր է հակահարուցիչը ստանալ։

Հետո հաղորդում են, որ մեկի արյան կարիքը կա, ով չի վարակվել։ Լուրն արագ տարածվում է, որ բոլորը շտապեն մոտակա հիվանդանոց՝ արյան քննություն հանձնելու։

Կամովին գնում ես նաև դու՝ քեզ հետ տանելով քո ընտանիքը, քո հարևանների հետ միասին՝ ինքդ քեզ հարցնելով՝ ի՞նչ կպատահի, այնպես կլինի, որ աշխարհը վերանա՞…

Արյան քննությունից հետո հիվանդանոցից դուրս է գալիս մի բժիշկ ու մի անուն բղավում։ Քո զավակներից ամենից փոքրը քո մոտ է։ Նա բաճկոնիցդ քաշում է ու ասում.

– Պապա, իմ անունն է։

  Մինչ ուշքի կգաս, քեզանից խլում են որդուդ, և դու կարողանում ես միայն ասել՝ սպասե՛ք։

  Նրանք պատասխանում են.

– Ամեն ինչ լավ կլինի, նրա արյունը մաքուր է, նրա արյունը անարատ է։

Հինգ րոպե հետո գոչելով ու ծիծաղելով՝ բժիշկները դուրս են գալիս։ Մեկ շաբաթվա ընթացքում առաջին անգամ ես տեսնում մեկին, որ ծիծաղում է։ Ամենից տարիքով բժիշկը մոտենում է քեզ ու ասում.

– Շնորհակալություն, պարո՛ն, Ձեր զավակի արյունը մաքուր է, հնարավոր է հակավարակը ստանալ…

Լուրը տարածվում է բոլորին, մարդիկ լացում են և ուրախությունից գոչում։ Հանկարծ բժիշկը մոտենում է քեզ ու քո ընտանիքին և ասում.

– Կարո՞ղ ենք մի րոպե Ձեզ հետ խոսել։ Չգիտեինք, որ արյան դոնորը կարող է երեխա լինել, ուստի կարիքն ունենք, որ արյունը տալու համար ստորագրեիք այս թղթերը։

Մինչ կարդում ես թղթերը, հանկարծ նկատում ես, որ նշված չէ արյան չափը, և հարցնում ես.

– Ինչքա՞ն արյուն։

Բժշկի ժպիտն անհետանում է, ու նա պատասխանում է.

– Չէինք մտածում, որ երեխա կարող է լինել։ Պատրաստ չէինք։ Պետք է ամբողջն օգտագործենք…

Չես հավատում և փորձում ես հրաժարվել.

– Բայց, բայց…

Բժիշկը շարունակում է համառել.

– Չե՞ք հասկանում, խոսքը ամբողջ աշխարհի մասին է։ Խնդրում ենք ստորագրեք, ամբողջ արյան կարիքն ունենք։

Դու խնդրում ես.

– Բայց չեք կարո՞ղ փոխներարկում կատարել։

Պատասխանն է.

– Եթե մաքուր արյուն գտնենք, կանենք…

– Կստորագրե՞ք։ Խնդրում ենք… ստորագրե՛ք…

Լռության մեջ և առանց զգալու մատներդ, որոնք սեղմում են գրիչը, ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՍ։

Քեզ հարցնում են.

– Ցանկանո՞ւմ եք տեսնել Ձեր որդուն։

Քայլում ես շտապ օգնության սենյակի վերջը, որտեղ նստած է քո որդին և ասում է.

– Պապա՛, մամա՛, ի՞նչ է պատահել։

Վերցնում ես նրա ձեռքն ու ասում.

– Տղաս, քո մայրը և ես քեզ շատ–շատ ենք սիրում, քեզ սիրում ենք և երբեք թույլ չենք տա, որ քեզ մի բան պատահի, որն անհրաժեշտ չէ, հասկանո՞ւմ ես։

Բժիշկը վերադառնում է և ասում.

– Ցավում եմ, բայց պետք է սկսենք, ամբողջ աշխարհում մարդիկ են մեռնում…

Դու այդտեղից կգնա՞ս, կկարողանա՞ս թիկունք դարձնել և քո որդուն այնտեղ թողնել, երբ նա քեզ ասում է՝ «Պապա, մամա, ինչո՞ւ եք ինձ թողնում…»։

Մեկ շաբաթ հետո, երբ մի միջոցառում է կազմակերպված, որտեղ պատվում են քո որդուն, վստահաբար կա մեկը, որ քնած է իր տանը, մյուսները չեն եկել, որովհետև նախընտրում էին զբոսնել կամ ֆուտբոլի խաղ նայել, մյուսները կեղծ ժպիտով են գալիս միջոցառմանը՝ ձև տալով, թե կարևորում են այն։ Կցանկանայիր կանգնեցնել այս ամենը և գոչել. «Իմ որդին ձեզ համար է մեռել, պատահմամբ ձեզ չի՞ հետաքրքրում»։

Երբեմն այս է, որ Աստված ցանկանում է մեզ ասել. «Իմ որդին մահացավ ձեզ համար և դեռ չեք կարողանում հասկանալ, թե որքա՞ն եմ ձեզ սիրում»։

Հետաքրքիր է տեսնել, թե ինչ հեշտ է մարդկանց համար մերժել Աստծուն և հետո հարցնել, թե ինչո՞ւ է աշխարհը վատից ահավորին գնում։

Հետաքրքիր է տեսնել, թե ինչպե՞ս ենք հավատում այն ամենին, ինչ գրված է թերթերում, սակայն վիճարկում ենք այն ամենը, ինչ գրված է Աստվածաշնչում։

Հետաքրքիր է, թե ինչպես է, որ օր առ օր մեզ ստիպում ենք երկրային բարիքներ կուտակել, սակայն նույնիսկ մեկ րոպե չենք նվիրում երկնքում գանձեր կուտակելուն։

Հետաքրքիր է, թե ինչպես է մեկն ասում՝ ես հավատում եմ Աստծուն, սակայն իր գործողություններով ցույց է տալիս, որ այլ աստվածների է հետևում (փող, հաջողություն, իր անձի և եսի մեծարանք…)։

Հետքրիքիր է, թե ինչպես ենք հազարավոր «կատակներ» ուղարկում մեկ էլեկտրոնային նամակի միջոցով, և առավել ևս հետաքրքիր է, թե ինչպես են այս նամակները կրակի նման տարածվում…, սակայն երբ նամակ ենք ուղարկում, որը վերաբերում է Աստծուն, բավականին մտածում ենք, մինչև որոշում ենք այդ նամակին մյուսներին հաղորդակից դարձնել։

Հետաքրքիր է, թե ինչպե՞ս է, որ բղջախոհությունը, տմարդությունը, զոեհիկն ու անպարկեշտը ազատորեն անցնում են հիպեր–տարածության միջով, մինչդեռ Հիսուսի մասին երկխոսությունները շնչահեղձ են լինում դպրոցներում և աշխատավայրերում։

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է, ՉԷ՞։

Ավելի հետաքրքիր է կիրակի օրը տեսնել հուզված մի քրիստոնյայի, ով սակայն անտեսանելի է ողջ շաբաթվա ընթացքում։

Հետաքրքիր է, որ երբ վերջացնես կարդալ այս գրությունը, անհրաժեշտություն չես զգա այն ուղարկել բոլոր նրանց, ովքեր քո էլեկտրոնայի հասցեիդ ցանկում են, որովհետև պարզապես վստահ չես, թե ինչի՞ են նրանք հավատում կամ ի՞նչ կմտածեն քո մասին։

Հետաքրքիր է, որ մենք անհանգստանում ենք ավելի շատ նրա համար, թե ինչ են մեր մասին մտածում մարդիկ, քան թե այն մասին, թե ինչ է մեր մասին մտածում Աստված։

Մեկ մարդու դատաստանը սապոնի պղպջակի նման է, ի՞նչ կարող է ձեզ անել սապոնի պղպջակը։

Նյութը քաղված է ինտերնետից։

Հայերեն թարգմանությունը Ձեզ ենք ներկայացնում www.lusamut.net կայքի կողմից։